ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԴԻԱՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

ԶԵԿՈՒՅԱԳԻՐ

Հարգելի՛ տիկին Գասպարյան,

Հիմք ընդունելով 2023 թվականի բաժնի կողմից իրականացված աշխատանքային ուսումնասիրությունները՝ առաջարկում ենք համայնքապետարանի ենթակայությամբ գործող համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2024 թվականի հաստիքացուցակներում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Թիվ 8 «Ոստան» մանկապարտեզ ՀՈԱԿ-ում նախատեսվում է «Յունիսեֆ Հայաստան»-ի հետ համագործակցության արդյունքում վերանորոգել չգործող խմբերից մեկը և շահագործել 2-3 տարեկան երեխաների ընդունելով, ուստի հաստիքացուցակում անհրաժեշտ է ավելացնել դաստիարակի /1.4 միավոր/ դաստիարակի օգնականի /1.3 միավոր/ և երաժշտության դաստիարակի /0.25 միավոր/ հաստիքներ:
2. Թիվ 10 «Ոսկեհատ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ում ավելացնել պահակի 2 հաստիքային միավոր:
3. Պատմազգագրական թանգարանում և Հ. Հովհաննիսյանի տուն-թանգարան ՀՈԱԿ-ներում էքսկուրսավարների և Պատմազգագրական թանգարանի գիտաշխատողի աշխատավարձը դարձնել 140.000 ՀՀ դրամ:
4. «Կոմիտասի անվան մշակույթի պալատ» ՀՈԱԿ-ում

   ա/ հսկիչ-տոմսավաճառի հաստիքի անվանումը փոխել՝ դարձնելով հսկիչ, և հսկիչների հաստիքային միավորը դարձնել 4՝ նախկին 3-ի փոխարեն.

   բ/ թվով 4 հսկիչների աշխատավարձը դարձնել 112.000 ՀՀ դրամ.

   գ/տնտեսվարի աշխատավարձը հավասարեցնել կազմակերպիչի և ադմինիստրատորի աշխատավարձին՝ 140.000 ՀՀ դրամ:

Կրթության և մշակույթի բաժնի պետ՝ Լ. Հակոբյան

18.12.2023 թ.